ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՈՂԲ

Արարատն է ողբում հալոցքով ուժգին,
Ծիրանակերտ դուդուկն՝ լալիս երգեցիկ...
Արաքսն է յորդել ցաւերից սաստիկ
Ու պատռում իրեն մի լուրից անսիրտ...
Վեհ քառագագաթ Արքան Արագած՝
Յորդում, բորբոքում է անշէջ մի կրակ։
Սեւանը, որ միշտ հանդարտ էր անհոգ՝
Մռայլ է հիմա եւ ահեբողոք...
Ծփել, վարարել, հատուցում է տենչում,
Այգիներն են մեր ջարդոտւում անվերջ,
Գցում են ներքեւ՝ ճիւղ, պտուղ, տերեւ։
Արեգակը խաւարում՝ մէկ անգիտանում,
Մէկ ցնորւում է, մէկ խելագարւում...
Քամին բարձրացնում է ամէն մի անէծք,
Եւ ամէն տրտունջք՝ հայհոյանք անկեղծ...
Քարերն են գլորւում վայրագ դէս ու դէն,
Վէմերը նետւում անհագ մահատենչ...
Աստղերը փայլուն լուսեղէն, շքեղ,
Նետում են իրենց անծայր տիեզերք։
Հողն է պատռւում, ճաքում, անդնդում
Իր գիրկն առնելով զաւակներ բազում։
Ամպերը մռայլ, անգոյն, սեւածին
Կարկուտով զարկում, անձրեւով լալիս՝
Լուանում նրանց արիւնը վճիտ։
Իսկ լուսինը լուռ սիրով մայրական
Թոյլ լուսեշող էր տալիս մի մանկան,
Գուրգուրում, պահում խաւարից հեռու՝
Զյայտնելով տեղը մահուանն անկուշտ։
Այս էին զգում անշունչ էակներ,
Ողբում, կոծում, ցոյց տալիս յոյզեր...
Իսկ ոճրագործի ներսում մի միայն
Անսիրտ, անհոգի, մեռած ու ունայն
Անգոյ քաջութեամբ՝
Լկտի յաղթութեամբ։
Գոհ իր կեցութեամբ գահին է բազմած
Կարծելով ինքն է դատաւոր, Աստուած։
Ձեռք բարձրացնելով մօր, քրոջ վրայ՝
Ոտատակելով ծերեր անպաշտպան
Եւ որբացնելով աղջիկ ու տղայ...
Իսկ տղամարդկանց դաւադիր ստով
Ներշնչած մարտի կեղծ պատրանքներով՝
Մի խուլ ամայի տեղում շատ հեռի
Խլում են զէնքն ու կեանքն այրերի։
Զէնքի պոչով հարուածներով բիրտ
Կնոջ արգանդին, դառնալով անսիրտ
Անգութ մի դահիճ նորածնասպան
Այս նոր օրերի մի նոր մարդասպան։
Իսկ աղջիկներին գեղեցիկ, չքնաղ
Տիրում են ստոր բնազդով արեան։
Բացելով հողը անխնայ ողջ-ողջ
Թաղում են մարդկանց եւ մահաբերում
Եւ ճիշդ այդ պահին քաջասիրտ մի մայր,
Նորածին մանկանն է մկրտում հողով
Թէ մեռնի որդիս՝ լոկ Քրիստոսով։

ՄԱՍԵԱՅ ԽԱՉՎԱՐԴ

Ապրիլ, 2022